25.124

ԽՍՀՄ—ՑԺԿ
ՊԵՏԱՇԽԽՆԱՑԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ և ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԱԿԿՐԵԴԻՏԻՎԱՑԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԵՏԱՇԽԽՆԱՑԴՐԱՄԱՐԿՂՆԵՐՈՒՄ

332
Խ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՍՀ ՊԵՏԱՇԽԽՆԱՑԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՑԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936 թ.

11 SEP 2013
25.124

Տեխ. խմբագիր՝ Յեվ արքագրեց
Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

332
Խ-11

Գյուղհրատի տպարան Ռեկլամ-Հրատ-Բյուրո
Քաղվիս № 1101 Պատվեր № 669—191 Տիրաժ 800

36-Կ
Ս 1463
05 JAN 2013

ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ ՇՐՋ(ՔԱՂ) ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻՆ

1936 թվի հոկտեմբերի 1-ից, խնայդրամարկղներում մտցվում է նոր ձևի ակկրեդիտիվ։ Նրա հիմնական տարբերությունը դոյություն ունեցող ակկրեդիտիվի ձևից հանդիսանում է հետևյալում,

1. Յուրաքանչյուր ակկրեդիտիվ վճարվում է լրիվ գումարի չափով, վորպիսի գումարի համար տված է ակկրեդիտիվը։

2. Ակկրեդիտիվը և ստուգիչ թերթիկն ունեն միևնույն համարն ու սերիան։

3. Յուրաքանչյուր խնայդրամարկղ, մեկ տրում, մեկ անձնավորության կարող է տալ հաճախորդի ցանկությամբ անսահմանափակ քանակությամբ ակկրեդիտիվներ ըստ վորի յուրաքանչյուրը 50 ռուբլուց վոչ պակաս և 1000 ռուբլուց վոչ ավելի։

4. Ակկրեդիտիվով գրամն ստանալիս, նրա տերը պիտի ստորագրի, ինչպես ակկրեդիտիվի, նույնպես և հսկիչ թերթիկի վրա։

5. Ակկրեդիտիվի տալու դեպքում, վարչություն ուղարկվում է ակկրեդիտիվի կտրոնը (սկզբնական փաստաթուղթ), իսկ ակկրեդիտիվի վճարելու դեպքում—ինքը. ակկրեդիտիվը, վորը կվիտանցիայի ժամանակ հանդիսանում է վորպես պատասխանող փաստաթուղթ։ Տված ակկրեդիտիվների արմատները և վճարված ակկրեդիտիվների ստուգիչ թերթիկները պահվում են ՇՐՋ(քաղ)խնայդրամարկղում։

6. Վերացվում է խնայդրամարկղներում կորած և ժամկետանց ակկրեդիտիվային փաստաթղթերի վերաբերյալ բեռնարկ տանելը։ Ժամկետանց ակկրեդիտիվը վճարելու, ինչպես և կորած ակկրեդիտիվով և հսկիչ թերթիկով (կամ այդ փաստաթղթերից վորևե մեկով) գումարը վճարելու համար թույլատրվում

թյունը տրվում է բացառապես ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչության կողմից։

Նոր ձևի ակկրեդիտիվից ոգտվելու կարգի և նրանց ձևակերպման մասին մանրամասն ցուցմունքներ տված են այս «Հրահանգ ակկրեդիտիվային գործարքների մասին պետաշխնայդրամարկղներում» գրքույկի մեջ։

Նոր ձևով ակկրեդիտիվները տալուն բոլոր խնայդրամարկղները պիտի ձեռնամուխ լինեն միևնույն որը—այսինքն 1936 թ. հոկտեմբերի 1-ին։ Սկսած 1936 թվի հոկտեմբերի 1-ից հին ձևավոր ակկրեդիտիվների տալը, ինչպես և 1936 թվի հոկտեմբերի 1-ից առաջ նոր ձևով ակկրեդիտիվ տալը—խստիվ արգելվում է։

Նոր ձևի ակկրեդիտիվների բլանկները կուղարկվեն Գետնիշի կողմից հանրապետական, յերկրային, մարզային և ավտոնոմ ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչությունների հաստատյալ։

Նշված վարչություններն իրենց հերթին պիտի ժամանակին բլանկները ուղարկեն իրենց յենթակա շրջ(քաղ)խնայդրամարկղներին արժեքավոր ծանրոցով (արժեքավորելով յուրաքանչյուրը 51 ռուբլի), յենթադրելով ժամանակավորապես բլանկների յեռամսյակային պահանջից, անպայմանորեն ստանալով շրջ(քաղ)խնայդրամարկղից հաստատումն բլանկներն ստանալու մասին։

Վարչությունները պարտավոր են ուղարկել շրջ(քաղ)խնայդրամարկղներին ակկրեդիտիվների բլանկները ձև № 76 ցուցակի հետ միասին, նշելով նրա մեջ բլանկների համարները (ձև № 76 ցուցակի ձևը տես «Հրահանգ խիստ հաշվարկման բլանկները մատակարարելու, պահպանելու, ծախսելու և հաշվառման յենթարկելու կարգի մասին» 1933 թվի մարտի 26-ի հրահանգի մեջ։ Ձև № 76 ցուցակների պատճենները պիտի մնա վարչությունում (հաշվապահությունում)։

Բլանկները բաշխելիս նպատակահարմար է մի վորոշ քանակություն պահել վարչության տրամադրության տակ, վորպես պահեստ, շտապ կարգով ուղարկելու այն շրջ(քաղ)խնայդրամարկղներին, վորտեղ ուղարկված բլանկների քանակն արագ կերպով կծախսվի։ Սեփական նկուղ չունենալու դեպքում, վարչությունն իր հաստատությամբ ուղարկող ակկրեդիտիվների բլանկների սահմանումն, ինչպես և այդպիսիք յենթակա շրջ(քաղ)խնայդրամարկղներին ուղարկելը կարող է հանձնարարել իր համաքաղաքային քաղխնայդրամարկղին, սակայն անպայման վարչության կարգադրությամբ յեվ նրա խիստ հսկողությամբ։

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
56257-66

Բլանկների ուղարկումը շրջ(քաղ)խնայդրամարկղներին պիտի կատարվի այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր շրջ(քաղ)խնայդրամարկղ կարողանա մինչև 1936 թվի սեպտեմբերի 20-ը բլանկներ մատակարարել իր այն բաժանմունքներին, վորոնց թուլատրված է կատարել ակկրեդիտիվներ տալու գործարքներ։

Վերոհիշյալ կարգով պիտի բաշխվեն ակկրեդիտիվների միայն առաջին նվագը (պարտիան)։ Ակկրեդիտիվների բլանկներով հետագա մատակարարումը շրջ(քաղ)խնայդրամարկղներին, կկատարվի սովորական կարգով, այսինքն շրջ(քաղ)խնայդրամարկղները պիտի բլանկների վերաբերյալ պահանջագիր ուղարկեն իրենց ՊԱԽԴ-ին և ՊՎ-ի վարչությանը, վորն սուտգիլուց և պահանջագրի վրա վավերագրելուց հետո, պիտի ուղարկի այդպիսիք գետնիշ։ Գետնիշը բլանկներն անմիջականորեն կուղարկի շրջ(քաղ)խնայդրամարկղի հաստատությամբ, իսկ բեռնագրի պատճենը—համապատասխան ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչության։

Մինչև 1936 թվի հոկտեմբերի մեկը մնացած նախորդ ակկրեդիտիվների չոգտագործված ձևերը—նախորդյակին, այսինքն 1936 թվի սեպտեմբերի 30-ին, այդ որվա գործարքները վերջանալուց հետո, պիտի ստուգվեն շրջ(քաղ)խնայդրամարկղներում շրջ(քաղ)խնայդրամարկղների վարիչների և գլխ. հաշվապահների կողմից, այդ բլանկները պահելու համար պատասխանատու գանձապահի ներկայությամբ, իսկ բաժանմունքներում—բաժանմունքների վարիչների (վերահսկիչների) կողմից գանձապահների ներկայությամբ։

Բլանկների ստուգելու մասին պիտի կազմվի արձանագրություն 3 որինակից ուշելով նրանց մեջ բլանկների քանակը, նրանց համարները ու սերիաները։ Բլանկները խմբավորել կապոցների մեջ բոլ համարների պիտի կապել ընդունելի ձևով յեվ կնքել խնայդրամարկղների զմուռսե կնիքով։

Բաժանմունքը, կնքած բլանկներն արձանագրության մեկ որինակի հետ միասին, պիտի հանձնի, կամ ուղարկի շրջ(քաղ)խնայդրամարկղի նկուղը 1936 թվի հոկտեմբերի 1-ին։ Արձանագրության յերկրորդ որինակն—որական հաշվեվերության հետ միասին պիտի ուղարկի շրջ(քաղ)խնայդրամարկղի հաշվապահությանը։

ՇրՋ(քաղ)խնայդրամարկղը իր բլանկների ստուգման և կնքման վերաբերյալ արձանագրության մեկ օրինակը նույնպես պիտի հանձնի շրՋ(քաղ)խնայդրամարկղի հաշվապահությանը։

ՇրՋ(քաղ)խնայդրամարկղի հաշվապահությունը պիտի ըստուգի բլանկների մնացած քանակության ճշտությունը, նրանց համարները և սերիաները համաձայն արձանագրության— հաշվառման տվյալների հետ։

Ստանալով բոլոր յենթակա խնայդրամարկղներից ակկրեդիտիվների բլանկները շրՋ(քաղ)խնայդրամարկղը պարտավոր է բոլոր բլանկներն ուղարկել արժեքների ստուգող և վոչնչացնող հանձնաժողովին—առաջնորդող գրությամբ, որի մեջ պիտի նշված լինեն, բլանկների քանակը, նրանց համարները յեվ սերիաները։

Այդ նամակը կազմվում է 5 օրինակից, որից 3 օրինակը բլանկների հետ միասին ուղարկվում են հանձնաժողովին (յերկու օրինակը դրվում է կապոցի մեջ, իսկ մեկն ուղարկվում է նամակի մեջ) մեկն՝ իր ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչությանը և մեկն ել մնում է շրՋ(քաղ)խնայդրամարկղում։

Բլանկներն ուղարկելիս, նրանց արժեքը (յուրաքանչյուր բլանկի համար 1 ռուբլի պայմանական արժեքով) դուրս է գրվում № 233 հաշվից և դրանցվում է № 234 հաշիվը։

Արժեքներն ստուգող և վոչնչացնող հանձնաժողովը ստուգելով բլանկների քանակը, համարները և սերիաները և վոչնչացնելով այդպիսիք, նշանակումներ է անում վոչնչացման մասին (հանձնաժողովի նախագահի և բոլոր անդամների ստորագրություններով) առաջնորդող նամակների յերեք օրինակների վրա, որից հետո այդ նամակի մեկ օրինակն ուղարկում է համապատասխան շրՋ(քաղ)խնայդրամարկղին, իսկ յերկրորդ օրինակը ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչություն (հաշվապահություն)։

Առաջնորդող նամակի վրա հանձնաժողովի կողմից կատարված նշանակման հիման վրա, շրՋ(քաղ)խնայդրամարկղը վոչնչացված բլանկների պայմանական արժեքը դուրս է գրում № 234 հաշվից։

ՇրՋ(քաղ)խնայդրամարկղը յեվ վարչությունն իրենց մոտ ունեցած առաջնորդող նամակի օրինակներով պիտի հետևեն ժամանակին ստացվելու հանձնաժողովից այդ նամակի յերկրորդ օրինակները բլանկներ վոչնչացնելու մասին յեղած ցուցակներով։

1936 թվի նոյեմբերի 1-ից վոչ ուշ, բոլոր վարչությունները պարտավոր են կազմել վոչնչացված ակկրեդիտիվների բլանկների խմբավորված ցուցակ, նշելով նրա մեջ ըստ յուրաքանչյուր շրՋ(քաղ)խնայդրամարկղի բլանկների քանակը, համարները և սերիաները և ուղարկել այդ ցուցակը ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի գլխավոր վարչությանը (գլխավոր հաշվապահությանը)։ Վոչնչացված բլանկների խմբավորված ցուցակը պիտի ստուգվի և ստորագրվի վարչության պետի և գլխավոր հաշվապահի կողմից։

Հսկիչ թեքթիկների բլանկները մնում են խնայդրամարկղներում—մինչև հատուկ կարգադրություն։

Հին ձևի ակկրեդիտիվները, որոնք ներկայացվում են շրՋ(քաղ)խնայդրամարկղները և ակկրեդիտիվներ տալու իրավունք ունեցող առաջին կարգի բաժանմունքները վճարման համար, սկսած 1936 թվի հոկտեմբերի 1-ից (նոր ակկրեդիտիվներ բաց թողնելու օրից) պիտի վճարվեն միայն լրիվ չափով։ Այն դեպքում յերբ հաճախորդը ցանկանում է ստանալ ակկրեդիտիվներով մուծված գումարի միայն մի մասը, հին ձևի ակկրեդիտիվը պիտի վճարվի ամբողջությամբ, կամ հաճախորդին—նրա ցանկության դեպքում, կարող է տրվել նոր ձևի մեկ, կամ մի քանի ակկրեդիտիվներ։ Սկսած 1936 թվի հոկտեմբերի 1-ից ակկրեդիտիվներ տալու իրավունք չունեցող 1-ին կարգի և 2-րդ կարգի բաժանմունքները մասնակի վճարման համար ակկրեդիտիվներ ներկայացնելու դեպքում, բաժանմունքի վերահսկիչը պարտավոր է կատարել մասնակի վճարումն ակկրեդիտիվով, նախազգուշացնելով միաժամանակ հաճախորդին, վոր հաջորդ անգամ հին ձևի ակկրեդիտիվը ներկայացնելու դեպքում՝ կվճարվի ամբողջությամբ և ցույց տալ մոտակա շրՋ(քաղ)խնայդրամարկղի կամ 1-ին կարգի բաժանմունքի (վորին իրավունք է վերապահված ակկրեդիտիվներ տալ) հասցեն, վորտեղ հաճախորդը կարող է ստանալ նոր ձևի ակկրեդիտիվ։

Կորցրած հին ձևի ակկրեդիտիվային փաստաթղթերով գումարներ վճարելու վերաբերյալ, խնայդրամարկղները և վարչությունները պիտի ղեկավարվեն 1935 թվի հունվարի 23-ի «Փոխադրական և ակկրեդիտիվային գործարքների մասին հրահանգի» ցուցմունքներով։

Սկսած 1936 թվի հոկտեմբերի 1-ից, կորցրած, ինչպես հին,

նույնպես և նոր ակկրեդիտիվային փաստաթղթերով գումարները վճարելու թույլտվությունները — վարչությունները պիտի տան համապատասխան շրջ(քաղ)խնայդրամարկղներին փոխադրական № 10 ձևն ուղարկելու միջոցով։ Շրջ(քաղ)խնայդրամարկղները վճարում են այդ փոխադրումները, փոխադրումների վճարման համար սահմանված կարգով։

Վարչությունը համապատասխան քանակությամբ ձև № 10 փոխադրական բլանկներն ստանում է համաքաղաքային շրջ(քաղ) խնայդրամարկղից։

Այդ կապակցությամբ վարչությունները պիտի 1936 թվի հոկտեմբերի 1-ին ստուգեն «կտրած ակկրեդիտիվներով վճարման թույլտվություններ» բլանկների մնացորդը և մնացած բոլոր բլանկները պիտի վոչնչացնեն այրելու միջոցով։

Բլանկներն ստուգելու և վոչնչացնելու մասին պիտի կազմել 2 որինակից արձանագրություն, նշելով նրա մեջ վոչնչացված բլանկների համարները։ Արձանագրությունը պիտի ստորագրեն վարչության պետը և գլխավոր հաշվապահը, ինչպես և միջդրամարկղային շրջանառության խմբի ղեկավարը։ Արձանագրության մեկ որինակը պիտի ուղարկել ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի գլխավոր վարչության։

ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի հանրապետական, յերկրային, մարզային և ինքնավար հանրապետությունների վարչությունները, վորոնք կառավարում են ակկրեդիտիվային փաստաթղթերի կվիտովկա, պիտի 1936 թվի հոկտեմբերի 1-ից ստանեն բալանսում նախորդ ձևի ակկրեդիտիվային փաստաթղթերի համար առանձին և նոր ձևի ակկրեդիտիվային փաստաթղթերի համար առանձին—հաշվառում։

Այդ նպատակով վարչությունները պարտավոր են առ 1-ը հոկտեմբերի 1936 թվի մնացած կվիտովկայի չյենթարկված կրեդիտային և դեբետային ակկրեդիտիվային փաստաթղթերի համար կազմել ցուցակ, ստուգել ցուցակի գումարները բալանսային տվյալների հետ և № 102 հաշվի մնացորդը փոխանցել բալանսում «մինչև 1936 թվի հոկտեմբերի 1-ը տված ակկրեդիտիվներ» անվան տակ բացված № 112 հաշվին, իսկ № 103 ա հաշվի և № 103 բ հաշվի մնացորդները «վճարումներ մինչև 1936 թվի հոկտեմբերի 1-ը իր յերկրային, մարզային խնայդրամարկղների կողմից տված ակկրեդիտիվներով» անվան տակ բալանսում բացված № 113 հաշվին, բաժանելով այդպիսին յերկու յենթահաշիվների.

«ա» մասնակի կվիտովկայի յենթարկված և

«բ» կվիտովկայի չենթարկվող։

Նոր ձևի ակկրեդիտիվային փաստաթղթերը պիտի հաշվի

առնվեն №№ 102 և 103 հաշիվներում, բայց վորում № 103 հաշվի բաժանումը յենթահաշիվների վերանում է, այնքան, վորքան նոր ակկրեդիտիվները վճարվում են միանգամից, լրիվ գումարով։

№ 104 հաշիվը չի բաժանվում և նրանով պիտի հաշվի առնել ինչպես հին, նույնպես և նոր ձևի ակկրեդիտիվային փաստաթղթերը։

Այդ կապակցությամբ, վարչությունները պիտի պահանջեն, վորպեսզի յենթակա շրջ(քաղ)խնայդրամարկղները փաստաթղթային հաստատություն ներկայացնելիս նին յեվ նոր ակկրեդիտիվային փաստաթղթերը ներկայացնեն առանձին ցուցակներով։

№ 104 հաշվի փաստաթղթերը կվիտովկայի համար ուրիշ վարչություն ուղարկելիս, փաստաթղթերը նույնպես պիտի դասավորել ըստ տեսակների՝ փաստաթղթեր հին ձևի ակկրեդիտիվների և փաստաթղթեր նոր ձևի ակրեդիտիվների, կազմելով նրանց համար առանձին ցուցակներ։

ՊԱԽԴ-ի յեվ ՊՎ-ի գլխավոր վարչության
պետի տեղակալ՝ ԲԱԼԳԱՅԵՎ

Խնայգործարքների բաժնի վարիչ՝ ՈՒՇԶԵՐԲՈՎ

Գլխ. հաշվապահ՝ ԴՐՈՒՑԱ

ՀՐԱՀԱՆԳ

ԱԿԿՐԵԴԻՏԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐՈՒՄ

Ակկրեդիտիվային գործարքը կայանում և հետևյալում.

Յուրաքանչյուր քաղաքացի մի տեղից մեկնելով մի ուրիշ տեղ, կարող է ի հաշիվ դրամարկղը կանխիկ մուծած իր դրամի կամ ի հաշիվ իր ավանդի, ստանալ մի վորոշ ժամանակի համար հատուկ փաստաթուղթ «ակկրեդիտիվ» անունով։

Ակկրեդիտիվի տերն այդ ակկրեդիտիվով կարող է ստանալ իր մուծած գումարը ԽՍՀՄ-ի բոլոր ցանկացած դրամարկղներում (բացի գործակալություններից)։ Ակկրեդիտիվային գործարքների կատարման կարգը խնայդրամարկղներում սահմանված է հետևյալ կերպ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

1. Ակկրեդիտիվները տրվում են 4 ամիս ժամանակով։

2. Յուրաքանչյուր ակկրեդիտիվ տրվում է 50 ռուբլուց վոչ պակաս և 1000 ռուբլուց վոչ ավելի գումարով։ Հաճախորդի ցանկությամբ, նրան կարելի է տալ մի քանի ակկրեդիտիվներ անսահմանափակ ընդհանուր գումարով։

3. Յուրաքանչյուր ակկրեդիտիվ վճարվում է լրիվ, այսինքն տված գումարի չափով։ Ակկրեդիտիվով մասնակի վճարումներ չի թույլատրվում։

Խնայդրամարկղն ակկրեդիտիվը տալու ժամանակ, պիտի տա յուրաքանչյուր հաճախորդի այն մասին, վոր նա կարող է

ստանալ մի քանի ակկրեդիտիվներ, յեթե նա յենթադրում է ըստանալ իր կողմից մուծված գումարը մի քանի անգամ։

4. Ակկրեդիտիվները տրվում են միայն անվանական, նշելով նրանց վրա այն անձնավորության ազգանունը, անունը և հայրանունը, վորին տրվում է ակկրեդիտիվը։

Ըստ ներկայացնողի, ինչպես և իրավաբանական անձանց ակկրեդիտիվներ տալն արգելվում է։

5. Ակկրեդիտիվները տրվում են միայն հաճախորդի կողմից մուծված կանխիկ դրամի դեմաց։

Յեթե խնայդրամարկղի ավանդատուն ցանկանում է ի հաշիվ իր ավանդի ակկրեդիտիվ ստանալ, ապա նա պարտավոր է ստանալ անհրաժեշտ գումարն ավանդից և մուծել այդպիսին ակկրեդիտիվի համար։

6. Ակկրեդիտիվները տրվում են հաճախորդի բանավոր դիմումով բոլոր ՀՐՀ(քաղ)խնայդրամարկղների, ինչպես և այն առաջին կարգի բաժանմունքների կողմից, վորոնց տված է այդ իրավունքը ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի Դիլավոր Վարչության կողմից։ Այդպիսի 1-ին կարգի բաժանմունքների ցուցակը ուղարկվում է բոլոր խնայդրամարկղներին։

Յուրաքանչյուր խնայդրամարկղում պիտի կախված լինի մոտակա այն խնայդրամարկղների ցուցակը, վորոնք ակկրեդիտիվներ են տալիս, նշելով ցուցակի մեջ այդ խնայդրամարկղների հասցեները և աշխատանքի ժամերը։

7. Ակկրեդիտիվների վճարումը կատարում են բոլոր շրջանային և քաղաքային խնայդրամարկղները և բոլոր առաջին և յերկրորդ կարգի բաժանմունքները։

Գործակալությունների շենքերում նույնպես պիտի կախված լինի մոտակա խնայդրամարկղների ցուցակը, վորոնք կատարում են ակկրեդիտիվների վճարումներ, նշելով ցուցակի մեջ այդ խնայդրամարկղների հասցեները և նրանց աշխատանքի ժամերը։

8. Ակկրեդիտիվը վճարվում է տիրոջ կողմից ակկրեդիտիվը և նրան կից հսկիչ թերթիկը, ինչպես և անձնագիրը կամ միլիցիայի կողմից անձնագրի փոխարեն նրան տված ժամանակավոր վկայականը ներկայացնելիս։

Գյուղական վայրերում ապրող և անձնագիր չունեցող անձիք

անձնագրի փոխարեն ներկայացնում են գործկոմի, միլիցիայի կամ գյուղխորհրդի կողմից տված անձնական վկայական։ Զինվորական ծառայողները ներկայացնում են զինվորական մասերից ստացված վկայականներ։

9. Ակկրեդիտիվների վճարումը կարող է կատարվել հավատարմագրերով։ Ակկրեդիտիվով դրամ ստանալու համար հավատարմագրերի մեջ անպայման պիտի նշվի ակկրեդիտիվի համարը, սերիան և գումարը։

Ակկրեդիտիվի տիրոջ ստորագրությունը հավատարմագրի վրա պիտի հաստատված լինի նոտարական գրասենյակի, ժողովրդական դատարանի կամ ՀՊՀ(քաղ)գործկոմի կողմից։

10. Ակկրեդիտիվի բլանկը կազմված է չորս մասից՝ արմատից, ակկրեդիտիվից, կտրոնից և հսկիչ թերթիկից։

11. Վոչ մի ուղղում, թեկուզ և բացատրականով (оговренные) ակկրեդիտիվի և հսկիչ թերթիկի վրա—չի թույլատրվում։ Յեթե ակկրեդիտիվի բլանկը լրացնելիս, սխալներ կարվեն ապա բլանկի վրա պիտի քաշել խաչաձև գծեր և վերահսկիչը պիտի գրի նրա վրա իր ստորագրությամբ «փչացված է», իսկ փչացվածի փոխարեն պիտի լրացնի նոր բլանկ։

12. Ակկրեդիտիվը տալու ժամանակ հաճախորդից գանձում են վճար 50 կոպեկի չափով։ Այն դեպքում, յերբ հաճախորդին տրվում է միաժամանակ մի քանի ակկրեդիտիվներ նշված վճարը գանձվում է յուրաքանչյուր ակկրեդիտիվից։ Ակկրեդիտիվը վճարելու ժամանակ, վոչ մի վճար չի գանձվում։

2. ՏՐՎՈՂ ԱԿԿՐԵԴԻՏԻՎԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Գործառնական որվա սկզբին, վերահսկիչն ստանում է գանձապահից անհրաժեշտ քանակով բլանկներ իր ստորագրությամբ, նշելով ստացված ակկրեդիտիվների համարներն ու սերիաները հատուկ տետրակի մեջ, վորը պահվում է գանձապահի մոտ։ որինակ—«1936 թվի մարտի 20 ին սերիա ԲԱ № 125678-ից մինչև № 125700 ակկրեդիտիվային բլանկներն ստացա» (ստորագր.)։

14։ Ակկրեդիտիվը տալու ժամանակ, վերահսկիչը հարցնելով հաճախորդից այն մասին, թե նա ցանկանում է մուծած գումարի համար ստանալ մեկ, թե մի քանի ակկրեդիտիվ, ձևակերպում է ակկրեդիտիվները հետևյալ կերպ։

ա) Գրում է ակկրեդիտիվի բոլոր մասերի վրա արմատի, ակկրեդիտիվի վերևի մասի, կտրոնի և հսկիչ թերթիկի վերևի մասի վրա, գումարը թվերով, գումարը բառերով, ակկրեդիտիվը ավոդխնայդրամարկղի համարը և անվանումը, ինչպես և ակկրեդիտիվը տալու ամսաթիվը, ըստ վորում ամսի անունն անպայման բառերով։

բ) Արմատի, ակկրեդիտիվի և կտրոնի վրա գրում է հաճախորդի ազգանունը, անունը, և հայրանունը։

գ) Առաջարկում է հաճախորդին ստուգել յուրաքանչյուր ակկրեդիտիվի վրա գրված իր ազգանվան, անվան և հայրանվան ճշտությունը, տալ իր ստորագրության որինակը յուրաքանչյուր ակկրեդիտիվի վրա և ստորագրել յուրաքանչյուր կտրոնի վրա—ակկրեդիտիվներն ստանալու մասին։

դ) Դնել ակկրեդիտիվի, կտրոնի և հսկիչ թերթիկի վրա խնայդրամարկղի կնիքը։

յե) Ստորագրում է ակկրեդիտիվի բոլոր չորս մասերը։

զ) Բաժանում է ակկրեդիտիվը արմատից հսկիչ թվերը կտրելու միջոցով այնպես, վորպեսզի ակկրեդիտիվի վրա մնացած թվերը կազմեն ակկրեդիտիվի գումարը (որինակը տես № 1 հավելվածում)։

է) Առանձնացնում է կտրոնն ակկրեդիտիվից, նույնպես հսկիչ թվերը կտրելու միջոցով, ըստ վորում ակկրեդիտիվի վրա մնացած թվերը նույնպես պիտի կազմեն ակկրեդիտիվի գումարը։

ը) Առանձնացնում է հսկիչ թերթիկը կտրոնից։

թ) Գրում է գործառնական որագրի մեջ յուրաքանչյուր ակկրեդիտիվի համարը և սերիան, հաճախորդի ազգանունը և գումարը։

ժ) Առանձին տողով գրում է յուրաքանչյուր առանձին հաճախորդից (համաձայն նրան տված ակկրեդիտիվների քանակի) ակկրեդիտիվի համար ստացված վճարը։

ի) Հանձնում է ներքին կարգով ակկրեդիտիվի բոլոր չորս մասերն էլ գանձապահին։

15. Գանձապահն ստանալով վերահսկիչից ակկրեդիտիվի բոլոր չորս մասերն էլ։

ա) Ստուգում է նրանց ձևակերպման ճշտությունը և ստորագրում է այդպիսիք։

բ) Ստանում է հաճախորդից այն գումարը, որի համար տրվում է ակկրեդիտիվը և ակկրեդիտիվի համար վճարը (յուրաքանչյուր ակկրեդիտիվից 50 կոպեկ)։

գ) Նշանակումներ է անում ակկրեդիտիվների հաշվառման ձև № 77 տեղեկագրի մեջ, ակկրեդիտիվների համապատասխան համարների և սերիաների բլանկների ծախսելու մասին։

դ) Տալիս է հանձնարարական ակկրեդիտիվը յուր հսկիչ թերթիկը, նախազգուշացնելով հաճախորդին այդ փաստաթղթերն իրարից անջատ պահելու անհրաժեշտության մասին, իսկ արմատն ու կտրոնն ամրացնում է միմյանց և պահում է իր մոտ մինչև գործառնական տրվա վերջը։ Գործառնական տրվա վերջանալիս, ակկրեդիտիվների արմատները և կտրոնները տրվա հաշվեկշռության հետ միասին ուղարկում է շրջ(քաղ)ինայդրամարկղի հաշվապահությանը։

16. Գործառնական տրվա վերջանալիս, վերահսկիչը կազմում է տրվա ընթացքում ակկրեդիտիվների համար ստացված վճարի վերաբերյալ ձև № 53 որդերը և հանձնում է այդպիսին գանձապահին ստորագրության համար։

17. Ակկրեդիտիվն անդրադառնալ հաճախորդի տալու դեպքում, հաճախորդի ստորագրության որինակի փոխարեն պիտի դրել «անդրադառնալ» և պիտի դրել հաճախորդի անվանագրի կամ նրան փոխարինող փաստաթղթի համարը, ամսաթիվը, փաստաթուղթը տալու վայրը և անվանումը։ Այդ դրանցումը պիտի ստորագրի վերահսկիչը։

Դրա հետ միասին, վերահսկիչը պիտի նախազգուշացնի հաճախորդին, որ գումարի վճարումն ակկրեդիտիվով կկատարվի միայն միևնույն փաստաթղթերը ներկայացնելու դեպքում։

3. ՎՃԱՐՎՈՂ ԱԿԿՐԵԴԻՏԻՎՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Այն դեպքում՝ երբ հաճախորդը ներկայացնում է վճարելու համար ակկրեդիտիվը և հսկիչ թերթիկը, վերահսկիչը՝

ա) Ստուգում է հափշտակված ակկրեդիտիվների բլանկների տեղեկագրով (ինչպես և հափշտակված ակկրեդիտիվների բլանկների համարների և սերիաների մասին ստացված ռադիոգրերով և տեղեկություններով, յեթե այդ ռադիոգրերը և տեղեկությունները չեն մտել տեղեկագրի մեջ), թե չի՞ գտնվում արդյոք ներկայացված ակկրեդիտիվի համարը և սերիան հափշտակված ակկրեդիտիվների թվում։

բ) Ստուգում է, թե ակկրեդիտիվը տված է արդյոք ակկրեդիտիվ տալու իրավունք ունեցող ինայդրամարկղի կողմից։

գ) Ստուգում է, թե ճիշտ է արդյոք ձևակերպված վճարման համար ներկայացված ակկրեդիտիվը և հսկիչ թերթիկը (չկան արդյոք նրանց վրա մաքրված, կատարված ուղղումների հետքեր և այլն), համապատասխանում է արդյոք ակկրեդիտիվի աջ և ձախ կողմերի հսկիչ թվերն ակկրեդիտիվի գումարին, համապատասխանում է արդյոք կնիքի վրա նշված ինայդրամարկղի համարը և անվանումն ակկրեդիտիվի և հսկիչ թերթիկի վրա գրված ինայդրամարկղի համարին և անվանը, կամ արդյոք ակկրեդիտիվի և հսկիչ թերթիկի վրա վերահսկիչի և գանձապահի ստորագրությունները, ակկրեդիտիվն ու հսկիչ թերթիկը միևնույն համարով ու սերիայով են արդյոք ներկայացված, միևնույն գումարներն են արդյոք նրանց վրա գրված և այլն)։

դ) Ստուգում է, թե ժամկետանց չի արդյոք ակկրեդիտիվը։

յ) Առաջարկում է հաճախորդին ստորագրել իր ներկայությամբ ակկրեդիտիվի ստորին մասի վրա և հսկիչ թերթիկի ստորին մասի վրա տեղադրած գումարն ստանալու մասին, որի համար տված է ակկրեդիտիվը (այսինքն գրել ռուբլիների գումարը բառերով, ստորագրել և գրել ամսաթիվ)։

Ակկրեդիտիվի և հսկիչ թերթիկի վրա ստորագրություն վերցնելու համար պատասխանը բացատրվում է նրանով, որ ակկրեդիտիվը վճարող շրջ(քաղ)ինայդրամարկղի գործերում պիտի մնան լրիվ ձևակերպված ծախսային փաստաթուղթ—հսկիչ թերթիկ և, որ նույնպիսի լրիվ ձևակերպված ծախսային փաստաթուղթ-ակկրեդիտիվ—պիտի գտնվի տվյալ ակկրեդիտիվի փաստաթղթերն ստուգող և կվիտանցիայի յենթարկող վարչությունում։

զ) Համեմատում է ավանդատվի ստորագրությունը, հաճախորդի կողմից ակկրեդիտիվի և անձնագրային փաստաթղթի վրա յեղած ստորագրության որինակի հետ, յեթե վերջինիս վրա նույնպես ստորագրություն կա։

ե) Գրում է ակկրեդիտիվի և հսկիչ թերթիկի ստորին մասի վրա (հաճախորդի ստորագրությունից առաջ) իր խնայդրամարկղի համարը և անվանումը և ստորագրում է յերկու փաստաթղթերի ստորին մասերը։

զ) Ակկրեդիտիվի յեռևի մասի վրա գրում է անձնագրային փաստաթուղթը և ստորագրում է այդ նշանակումը։

թ) Գրում է գործառնական որագրի մեջ ակկրեդիտիվի համարը և սերիան, ակկրեդիտիվի տիրոջ ազգանունը, ակկրեդիտիվը ավող խնայդրամարկղի անվանումը և գումարը։

ժ) Տալիս է հաճախորդին համարային ժետոն, գրելով նրա համարը ակկրեդիտիվի վրա։

ի) Հանձնում է ներքին կարգով ակկրեդիտիվը, հսկիչ թերթիկը և անձնագրային փաստաթուղթը—դանձապահին։

Ծանոթություն.—Անգրագետ հաճախորդին տված ակկրեդիտիվը վճարելիս, վերահսկիչը համոզվում է անձնագրային փաստաթուղթը—ակկրեդիտիվի վրա կատարված գրանցման հետ։ Ակկրեդիտիվի և հսկիչ թերթիկի վրա ստորագրություն վերցնելու փոխարեն վերահսկիչը դուրս է գրում գումարը, գրում է «անգրագետ է», «ներկայացված է այսինչ փաստաթուղթը»։ Բացի դրանից փաստաթուղթը սովորական կարգով գրանցվում է ակկրեդիտիվի յեռևի կողմի վրա։

19. Դանձապահը՝

ա) Ստուգում է հաճախորդի ակկրեդիտիվի ստորին մասի և հսկիչ թերթիկի ստորին մասի համապատասխան գումարներն այն գումարի հետ, որի համար տված է ակկրեդիտիվը։

բ) Ստուգում է անձնագրային փաստաթղթի մասին կատարված նշումների ճշտությունն ակկրեդիտիվի յեռևի կողմի վրա և ստորագրում է այդ նշումների տակը։

գ) Կանչում է հաճախորդին ժետոնի համարի համաձայն և ստուգում է ներկայացված ժետոնի ճշտությունն ակկրեդիտիվի վրա գրված նրա համարի հետ։

դ) Տալիս է հաճախորդին դրամը և վերադարձնում է նրան անձնագրային փաստաթուղթը, իսկ ակկրեդիտիվը և հսկիչ թերթիկը միմյանց ամրացված ձևով պահում է իր մոտ մինչև որվա վերջը։

Գործառնական որը վերջանալիս, վճարված ակկրեդիտիվները և հսկիչ թերթիկները որվա հաշվեմատյանի հետ միասին ուղարկվում է շրջ(քաղ)խնայդրամարկղի հաշվապահությանը։

20. Այն դեպքում, յերբ խնայդրամարկղը ներկայացնում է ճիշտ ձևակերպված ակկրեդիտիվ, կամ հսկիչ թերթիկ, խնայդրամարկղն ակկրեդիտիվը չպետք է վճարի և միաժամանակ պիտի հեռագրով (կատարելով ծախսն իր, խնայդրամարկղի հաշվին) պահանջը ակկրեդիտիվի տվող խնայդրամարկղից—ակկրեդիտիվի հաստատումը։ Այդ հաստատումն ստանալուց հետո միայն ակկրեդիտիվը կարող է վճարվել։

21. Խնայդրամարկղի աշխատակիցները պիտի կատարեն վճարման համար ներկայացված ակկրեդիտիվների և հսկիչ թերթիկների, ինչպես և անձնագրային փաստաթղթերի մանրամասն ստուգումը։ Յեթե կպարզվի, որ ակկրեդիտիվով գրամը տրված է ոչ թե ակկրեդիտիվի տիրոջին, այլ ուրիշ անձնավորության, խնայդրամարկղների աշխատակիցների անփութության պատճառով, որոնք ժամանակին չեն ստուգել անձնագրային փաստաթղթերը, կամ որոնք վճարել են ակկրեդիտիվը—հաճախորդի ստորագրությունն ակկրեդիտիվի և անձնագրային փաստաթղթերի վրա յեղած ստորագրության նմուշի հետ չհամապատասխանելու դեպքում, կամ որոնք վճարման համար ներկայացված ակկրեդիտիվը չեն ստուգել հափշտակված ակկրեդիտիվների բլանկների տեղեկագրով, կամ որոնք ակկրեդիտիվը վճարելիս թույլ են տվել վորևե սխալ, ապա սխալ տված գումարը բռնագանձվում է հանցավոր աշխատակիցներից ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1933 թվի հուլիսի 5-ի վորոշման մեջ նշված կարգով։

22. Շրջ(քաղ)խնայդրամարկղի հաշվապահությունն ստանալով խնայդրամարկղների հաշվեմատյանի հետ միասին ակկրեդիտիվների արմատներն ու կտրոնները (ակկրեդիտիվները տալու դեպքում) վճարված ակկրեդիտիվները և հսկիչ թերթիկները և ստուգելով այդպիսիք համապատասխան ձևով (մասնավորապես ստուգելով հափշտակված ակկրեդիտիվների բլանկների ցուցակով, թե չե՞ն վճարվել արդյոք ակկրեդիտիվներ, որոնք կազմած են յեղել հափշտակված բլանկների վրա)՝

ա) Ուղարկում է տված ակկրեդիտիվների և վճարված ակկրեդիտիվների տալոնները սահմանված ձևով իր ՊԱԽԴ-ի

56257-66

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. БИБЛИОТЕКА
ՀԱՍՈ-ԱՐՄ ՍՍՀ

և ՊՎ-ի վարչությանը—փաստաթղթային հաշվետվության հետ միասին։

բ) Ակկրեդիտիվների արմատները կարում է հատուկ գործի մեջ ըստ յուրաքանչյուր խնայդրամարկղի, հետևելով, վորպեսզի կարվեն այդպիսի արմատների հերթական համարներով։

գ) Վճարված հսկիչ թերթիկները պահում է որվա փաստաթղթերի մեջ։

4. ԺԱՄԿԵՏԱՆՑ ԱԿԿՐԵԴԻՏԻՎՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

23. Տված որվանից չորս ամիս անցնելուց հետո, ակկրեդիտիվը կարող է վճարվել յերեք տարվա ընթացքում, միայն այն մարզի (յերկրի, հանրապետության) ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի թույլտվությամբ, վորի սահմաններում տված է յեղել ակկրեդիտիվը։ Ակկրեդիտիվը ուժի մեջ լինելու ժամկետը լրանալուց յերեք տարի հետո—(այսինքն ակկրեդիտիվը տալուց 3 տարի 4 ամիս լրանալուց հետո), ակկրեդիտիվի վերաբերյալ վորևե պահանջ չի բավարարվի։

24. Ժամկետանց ակկրեդիտիվը վճարման համար ներկայացնելու դեպքում, խնայդրամարկղի վերահսկիչն ստուգելով ակկրեդիտիվի վճարունակությունը 18-րդ հոդվածում նշված կարգով, գրավոր, կամ հեռագրով (նայած ակկրեդիտիվի տիրոջ ցանկության) հարցում է անում այն մարզի (յերկրի, կամ հանրապետության) ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչությանը, վորի սահմաններում տված է յեղել ակկրեդիտիվը (համաձայն ակկրեդիտիվի վրա տրված վարչության անվան)։

Հարցումն անելու, ինչպես և հարցման պատասխանն ստանալու վերաբերյալ փոստային և հեռագրական ծախսերը դանձվում են հաճախորդից—ակկրեդիտիվը ներկայացնելիս։

Ակկրեդիտիվը վճարվում է այն դեպքում, յերբ ստացվում է վարչության նամակը կամ հեռագիրը, վորով թույլատրվում է ակկրեդիտիվը վճարել։ Թույլտվությունը կցվում է վճարված հսկիչ թերթիկին, իսկ ակկրեդիտիվի վրա նշանակում է արվում հիշյալ թույլտվության մասին։

5. ԴՐԱՄԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԿՈՐԱԾ ԱԿԿՐԵԴԻՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ

25. Դրամի վճարումը կորած ակկրեդիտիվային փաստաթղթերով կատարվում է ՀԽՀ(քաղ)ինայդրամարկղների կողմից, միայն այն հանրապետական, յերկրային և մարզային ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչության կողմից, վորին յենթակա յե ակկրեդիտիվը տված խնայդրամարկղը։ Ակկրեդիտիվային յերկու փաստաթղթերն եվ (ակկրեդիտիվը և հսկիչ թերթիկը) կամ միայն ակկրեդիտիվը կորցնելու դեպքում, վարչությունը թույլատրում է վճարել՝ այդպիսին վեց ամսից հետո—ակկրեդիտիվ տալու որից, յեթե այդ ժամանակամիջոցում ակկրեդիտիվային փաստաթղթերը վճարված չեն լինի։ Միայն հսկիչ թերթիկը կորցնելու դեպքում, վարչությունը թույլատրում է վճարել ակկրեդիտիվը—ստուգելուց հետո, թե իրոք տված է յեղել այդ ակկրեդիտիվը, վորի հսկիչ թերթիկը կորել է և չի ստացվել արդյոք վարչությունում հայտարարություն—հենց իրեն ակկրեդիտիվը կորցնելու մասին։

26. Ակկրեդիտիվի յերկու մասերն եվ կորցնելու դեպքում, ակկրեդիտիվի տերը պիտի հայտարարություն տա այդ մասին (կամ փաստով ուղարկի) անմիջականորեն այն հանրապետական, յերկրային, կամ մարզային ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչությանը, վորին յենթակա յե ակկրեդիտիվը տվող խնայդրամարկղը։

Հայտարարության մեջ պիտի նշված լինի՝ հաճախորդի աղգանունը, անունը և հայրանունը, նրա մշտական հասցեն, վոր խնայդրամարկղում, յերբ և ինչ դումարով է նա ստացել ակկրեդիտիվը, յերբ են կորել ակկրեդիտիվային փաստաթղթերը, ինչպես և ակկրեդիտիվի (յեթե հաճախորդը կարող է նշել) համարը և սերիան (հայտարարության ձևը տես № 2 հավելվածը)։ Այն դեպքում, յերբ ակկրեդիտիվի յերկու փաստաթղթերն եվ կորցրած ակկրեդիտիվի տերը դիմում է խնայդրամարկղին, վերջինս պարտավոր է ա) ցույց տալ հաճախորդին ակկրեդիտիվը կորցնելու մասին հայտարարության ձևը և բ) հայտնել հաճախորդին, թե նա վոր վարչությանը պիտի տա կամ ուղարկի փաստով հայտարարությունը և տա նրան այդ վարչության հասցեն։

27. Միայն ակկրեդիտիվը կորցնելու դեպքում, հաճախորդը կարող է այդ մասին հայտարարություն տալ ցանկացած շրջ(քաղ)խնայդրամարկղը։ Հայտարարությանը պիտի կցված լինի հսկիչ թերթիկը, որի ամբողջ յերեսի վրա հաճախորդը պիտի մակագրի «ակկրեդիտիվը կորել է այսինչ տարվա ամիսը և որը»։

Հիշյալ ձևով մարված հսկիչ թերթիկը և հայտարարությունն ընդունելիս, շրջ(քաղ)խնայդրամարկղը պիտի տա հաճախորդին ձև № 31 անդորրագիրը։ Հայտարարությունը հսկիչ թերթիկի հետ միասին, նույն որը և յեթ, շրջ(քաղ)խնայդրամարկղը պատվիրված նամակով պիտի ուղարկի այն ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչությանը, որին յենթակա յե ակկրեդիտիվը տվող խնայդրամարկղը։

Բացի դրանից, խնայդրամարկղի վերահսկիչը, որն ընդունում է միայն ակկրեդիտիվը կորցնելու մասին հայտարարությունը, պիտի բացատրի հաճախորդին այն մասին, որ անհրաժեշտ է ակկրեդիտիվը կորցնելու մասին անմիջապես հեռագրով հայտնել այն մարզի (յերկրի, հանրապետության) ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչությանը, որի սահմաններում տված է յեղել ակկրեդիտիվը։ Այն դեպքում, յերբ հաճախորդը համաձայնում է վերցնել իր վրա հեռագրի ծախսը, վերահսկիչը պիտի կազմի հեռագրի բովանդակությունը (հավելված № 3) և ուղարկի ըստ պատկանելույն։

Հեռագիրն ուղարկելու պատճառով չպետք է հետաձգել հաճախորդի դիմումը և հսկիչ թերթիկի ուղարկումը նույն վարչությանը։

Միայն ակկրեդիտիվը կորցնելու մասին հայտարարությունն ընդունելիս, խնայդրամարկղը պիտի նախազգուշացնի հաճախորդին, այն մասին, որ վճարման մասին թույլտվությունը կտրվի ակկրեդիտիվը տալու օրից վեց ամիս վոչ շուտ և, որ վճարման ժամկետը հասնելուց առաջ, հաճախորդը գրավոր պիտի հայտնի այն ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչությանը, որը պիտի տա վճարման թույլտվությունը իր և այն խնայդրամարկղի հասցեն, որից նա ցանկանում է ստանալ ակկրեդիտիվով գրամը։

29. Միայն հսկիչ թերթիկը կորցնելու մասին—հաճախորդը կարող է հայտարարություն տալ ցանկացած շրջ(քաղ)խնայդրամարկղը, որը նույն որը և յեթ պիտի ուղարկի այդ հայտարարությունն այն ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչությանը, որին յենթակա յե ակկրեդիտիվը տվող խնայդրամարկղը։

30. Ակկրեդիտիվի յերկու մասերը կամ միայն ակկրեդիտիվը կորցնելու դեպքում, այն հանրապետության, յերկրի կամ մարզի ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչությունը, որի սահմաններում տված է ակկրեդիտիվը, ակկրեդիտիվը տալու օրից 6 ամիս անցնելուց հետո, ուղարկում է հաճախորդի կողմից ցույց տված շրջ(քաղ)խնայդրամարկղը ձև № 10 փոխադրումը—հասանելիք գումարը վճարելու համար։

Շրջ(քաղ)խնայդրամարկղը անցկացնում փոխադրական գումարը № 97 հաշվի պարտքով և № 82 հաշվի պահանջով և այդ փոխադրականի վճարումը կատարում է ընդհանուր կարգով, որը սահմանված է փոխադրականներով գումարներ վճարելու համար։

31. Այն ակկրեդիտիվը վճարելու մասին թույլտվությունը որով կտրած է միայն հսկիչ թերթիկը, վարչությունն ուղարկում է նամակով կամ հեռագրով շրջ(քաղ)խնայդրամարկղին, ըստ որում վարչության պետի ստորագրությունը հեռագրի վրա պիտի հաստատված լինի հեռագրատան կողմից։

Հիշյալ թույլտվությունն ստանալուն պես, շրջ(քաղ)խնայդրամարկղն անմիջապես վճարում է ակկրեդիտիվը, պահպանելով ակկրեդիտիվները վճարելու վերաբերյալ այս հրահանգով սահմանված ամբողջ կարգը, բացառությամբ նրան, որ հսկիչ թերթիկի փոխարեն, դրամարկղը կազմում է ձև № 54 որդերը, որի յետևի կողմի վրա վերցնում է հաճախորդի ստորագրությունը—դրամն ստանալու մասին (ստորագրությունն ակկրեդիտիվի վրա, վերցվում է սովորական կարգով)։ Ձև № 54 որդերին պիտի կցել ակկրեդիտիվը վճարելու մասին վարչության գրավոր կամ հեռագրական թույլտվությունը։

32. Հաճախորդների հայտարարություններն ուղարկելը, ակկրեդիտիվային փաստաթղթերը կորցնելու մասին—հարցում ուղարկելը և նրանց պատասխանները, խնայդրամարկղների կողմից պիտի կատարվեն առանց որևե ուշացման։

33. Բոլոր փոստային և հեռագրական ծախսերը, որոնք կապված են փաստաթղթերն ուղարկելու, նախնական հարցումներ անելու և նրանց պատասխանելու հետ, պիտի կատարվեն ի

հաշիվ հաճախորդի, ըստ վորում, այդ ծախսերը ծածկելու համար հաճախորդի կողմից մեկ խնայդրամարկղը մուծած գումարը, վոչ մի դեպքում չպետք է փոխանցվի մի ուրիշ խնայդրամարկղ, փոստային և հեռագրական ծախսեր կատարելու նպատակով հաճախորդներից ստացված գումարները ձևակերպվում են ձև № 53 որդերով և անց են կացվում № 83 հաշվի պահանջով։ Փոստային ծախսեր կատարելու դեպքում, դուրս են գրվում այդպիսիք այդ հաշվից։ Յուրաքանչյուր ամսվա վերջը չծախսված փոստային ծախսերի գումարը դուրս է գրվում № 83 հաշվից № 126 «յեկամուտներ» հաշվի պահանջը։

Յեթե փոստային կամ հեռագրական ծախսերի գումարը գանձված է մեկ խնայդրամարկղում, իսկ ծախսերը կատարում է մեկ ուրիշ խնայդրամարկղ (կամ վարչություն), ապա գումարը գանձող խնայդրամարկղն անց է կացնում այդպիսին № 126 հաշվի պահանջով, իսկ փոստային կամ հեռագրական ծախսեր կատարող խնայդրամարկղը (կամ վարչությունը) անց է կացնում այդ ծախսերը № 129բ—պարտքով։

Ծանոթություն.—Հարցումներն ու պատասխանները կատարվում են հաճախորդների ցանկությամբ, հեռագրով, իրենց հաշվին։

34. Յեթե կորած ակկրեդիտիվային փաստաթղթերով գումարների վճարման ժամանակ տեղի կունենան սահմանված կարգի խախտումներ, ինչպես և, յեթե վճարը կկատարվի վոչ ըստ պատկանելության, ապա այդպիսի սխալ վճարման համար նյութական պատասխանատվությունն ընկնում է անձնապես այն աշխատակցի վրա, վորն անմիջականորեն կատարում է սխալ վճարումը և այն անձնավորության վրա, վոր թույլատրում է կատարել այդ վճարումը։

ՊԱԽԴ-ի յեվ ՊՎ-ի Գլխավոր վարչության պետի
տեղակալ ԲԱԼԳԱՅԵՎ

Խնայգործարքների բաժնի վարիչ ՈՒՇԶԵՐԲՈՎ

Գլխավոր հաշվապահ՝ ԴՐՈՒՅՑ.

1936 թիվ հունիսի 19



Հավելված № 2

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ—ԱԿԿՐԵԴԻՏԻՎԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

_____ խնայդրամարկղների վարչություն

քաղաք _____

(գրվում է խնայդրամարկղների այն վարչությունը, որին յենթակա յե կորած ակկրեդիտիվը տվող խնայդրամարկղը)

Քաղաքացի _____ -ից

(Ազգանուն, անուն և հայրանուն)

որն ապրում է _____

(մշտական բնակավայրի ճիշտ, մանրամասն հասցեն)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սրանով հայտնում եմ, որ _____

(կորցնելու ամսաթիվը)

կորցրել եմ № _____ ակկրեդիտիվը, № _____ հսկիչ թերթիկը, որը տված եր (յեթե հաճախորդը կարող է նշել) _____

(քաղաք)

_____ խնայդրամարկղում _____ (ակկրեդի-

(գյուղ, կայարան)

տիվը տալու ամսաթիվը)

_____ « » _____ ռուբլի դումարի չափով։

Ակկրեդիտիվի հետ միասին կորել են իմ անձնավորությունը հաստատող հետևյալ փաստաթղթերը, (թվել փաստաթղթերը, յեթե փաստաթղթերը չեն կորել, պիտի նույնպես նշել «փաստաթղթերը չեն կորել»)։

Այս հայտարարության պատասխանը խնդրում եմ ուղարկել _____ սահմանված ժամկետն անցնելուց հետո

(դրել ճիշտ հասցեն)

կորած ակկրեդիտիվի վճարման վերաբերյալ թույլտվությունը (յեթե թույլտվությունը կտրվի) խնդրում եմ ուղարկել _____

_____ խնայդրամարկղին

(դրել խնայդրամարկղի գտնվելու տեղը և համարը)

Հասցես, որը տված է ձեզ իմ հայտարարությանը պատասխանելու համար, ինչպես և խնայդրամարկղը, ուր խնդրել մե ուղարկելու թույլտվությունը, իմ կողմից փոփոխման յենթարկելու դեպքում, պարտավորվում եմ ինչպես առաջինի, նույնպես և յերկրորդի փոփոխման մասին հայտնել խնայդրամարկղների վարչությանը, որին յենթակա յե կորած ակկրեդիտիվը տվող խնայդրամարկղը։

Կորած ակկրեդիտիվի տերոջ ինքնաձեռագիր ստորագրությունը։

Հայտարարությունը տալու ամսաթիվը _____

Հավելված № 3

1. Դեֆեկտավոր ակկրեդիտիվի հաստատելու մասին հաղորդում է տրվում ուղարկելով հեռագիր ի հաշիվ խնայդրամարկղի։

ՀԵՌԱԳԻՐ

Դորկի 7/02 խնայդրամարկղին.

Հեռագրով հաստատեք հասցեն Մոսկվա, Իլյինկա 12 № 2694/10 խնայդրամարկղին դեֆեկտավոր ակկրեդիտիվը 15842 սերիա ԲԱ. տված սեպտեմբերի 5-ին հինգ հարյուր ռուբլի Շարովայի անունով։

№ 2694/10 խնայդրամարկղի վարիչ ՊԵՏՐՈՎ

№ 1 հեռագրի պատասխանը

Մոսկվա Իլյինկա 12-2694/10 խնայդրամարկղին ակկրեդիտիվ 15842 սերիա ԲԱ. Շարովային հինգ հարյուր հաստատում եմ

№ 7/02 խնայդրամարկղի վարիչ ՍԻԴՈՐՈՎ

---

2. Հայտարարություն ակկրեդիտիվը կորցնելու մասին հսկիչ թերթիկը—պահպանելու դեպքում ուղարկվում է խնայդրամարկղների վարչությանը, որին յենթակա յե ակկրեդիտիվը տվող խնայդրամարկղը (տես հսկիչ թերթիկի վրայի դրոշմը)

Հաճախորդի հաշվին.

Հեռագիր հեռագրատան հաղորդումով

Ֆրունզե—խնայդրամարկղների վարչության

Տոմարագրքեք 37856 սերիա ԲԱ. կորած ակկրեդիտիվը տված հուլիսի 10-ին 155/05 խնայդրամարկղի կողմից Արավանում հազար ռուբլի Սամսոնովի անվան հայտարարարությունն ուղարկում ենք փոստով։

14/01 խնայդրամարկղի վարիչ ՆԻԿՈԼԱՅԵՎ

№ 2 հեռագրի պատասխանն ուղարկելու կարիք չկա։

Հեռագիրն ուղարկող 14|01 խնայդրամարկղը, վորպես հաստատուն այն բանի, վոր այդ հեռագիրն հանձնվել է ըստ պատկանելույն, ստանում է հեռագրական հաղորդումը կապի հիմնարկներից։

---

3. Ակկրեդիտիվը հաստատելու մասին հսկիչ թերթիկը կորցնելու դեպքում.

Ուղարկվում է խնայդրամարկղների վարչությանը, վորին յենթակա յե ակկրեդիտիվը տվող խնայդրամարկղը (տես ակկրեդիտիվի վրայի դրոշմը)։

Հաճախորդի հաշվին.

Հեռագիր, վորի պատասխանը 15 բառի համար վճարված է

Ղեսսա—խնայդրամարկղների վարչության

Տոմարագրեք 56842 սերիա ԲԱ ակկրեդիտիվի կորած հսկիչ թերթիկը տված փետրվարի 32-ին 63|01 Նիկոլայևի խնայդրամարկղի կողմից չորս հարյուր ռուբլի Շարովի անվան հեռագրով հաստատեք հասցեն Լենինգրադի 1873 շրջխնայդրամարկղ Հուլիսի 3-ի փողոց

1873 շրջխնայդրամարկղի վարիչ ԼԻՏՎԻՆՈՎ

№ 3 հեռագրի պատասխանը—Լենինգրադ, Հուլիսի 3-ի փողոց 1873 շրջխնայդրամարկղին

Ակկրեդիտիվ 56842 սերիա ԲԱ. Շարովի չորս հարյուր ռուբլին հաստատում ենք

Խնայդրամարկղների վարչության պետ ՏԻՏՈՎ

(ստորագրությունը հաստատված է հեռագրատան կողմից)։

---

4. Ժամկետանց ակկրեդիտիվը հաստատելու մասին (ակկրեդիտիվը տալու օրվանից 3 տարի 4 ամսից վոչ ավելի)։

Ուղարկվում է խնայդրամարկղների վարչությանը, վորին յենթակա յե ակկրեդիտիվը տվող խնայդրամարկղը (տես ակկրեդիտիվի վրայի դրոշմը)։

Հաճախորդի հաշվին

Հեռագիր, վորի պատասխանը 15 բառի համար վճարված է։

Խարկով—մարզային խնայդրամարկղների վարչությանը

Կորելու մասին հայտարարության բացակայության պատճառով հեռագրով հաստատեք հասցեն Կիևի № 4 խնայդրամարկղին ժամկետանց ակկրեդիտիվ 16741 սերիա ԲԱ տված 1934 թվի մարտի 10-ին Սումի 48|02 խնայդրամարկղի կողմից Սաֆոնովի անունով հինգ հարյուր ռուբլի։

№ 4 խնայդրամարկղի վարիչ ՏԱՆԵԵՎ

№ 3 հեռագրի պատասխանը

(այն դեպքում, յերբ ակկրեդիտիվը չի հայտարարվել կորած)

Կիև № 4 քաղխնայդրամարկղին

16741 սերիա ԲԱ ակկրեդիտիվը Սաֆոնովի անունով հինգ հարյուր ռուբլի հաստատում եմ

Խնայդրամարկղների վարչության պետ ԿՈՒՏՈՒԶՈՎ

(Ստորագրությունը հաստատված է հեռագրատան կողմից)

№ 4 հեռագրի պատասխանը

(այն դեպքում, յերբ ակկրեդիտիվը հայտարարված է կորած)

Կիև № 4 քաղխնայդրամարկղին

16741 սերիա ԲԱ ակկրեդիտիվը Սաֆոնովի անունով հայտարարված է կորած բանեք ակկրեդիտիվը սակ կուղարկեք մեզ

Խնայդրամարկղների վարչության պետ ԿՈՒՏՈՒԶՈՎ

(Ստորագրությունը հաստատված է հեռագրատան կողմից)։

ՑՈՒՑԱԿ

ԱԿԿՐԵԴԻՏԻՎՆԵՐԸ ԿՎԻՏՈՎԿԱՅԻ ՑԵՆԹԱՐԿՈՂ ՊԱՀԴՅԵՎ ՊՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Составлен на 1 октября 1936 г.

Азербайджанской ССР	—г. Баку
Азово-Черноморск. края	—г. Ростов на Дону
Актюбинской обл.	—г. Актюбинск
Алма-Атинской обл.	—г. Алма-Ата
Армянской ССР	—г. Ереван
Башкирской АССР	—г. Уфа
Белорусской ССР	—г. Минск
Бурято-Монгольск. АССР	—г. Улан-Удэ
Винницкой обл.	—г. Винница
Воронежской обл.	—г. Воронеж
Восточноказахстанской обл.	—г. Семипалатинск
Восточносибирск. края	—г. Иркутск
Горьковского края	—г. Горький
Грузинской ССР	—г. Тбилиси
Дагестанской АССР	—г. Махач-Кала
Дальневосточн. края	—г. Хабаровск
Днепропетровской обл.	—г. Днепропетровск
Донецкой обл.	—г. Сталино
Западной обл.	—г. Смоленск
Западноказахст. обл.	—г. Уральск
Западносибирск. края	—г. Новосибирск
Иваново-Промышл. обл.	—г. Иваново
Калининской обл.	—г. Калинин
Калмыцкой АССР	—г. Элиста
Карагандинской обл.	—г. Петропавловск
Кара-Калпакской АССР	—г. Турткуль

арельской АССР	—г. Петрозаводск
Каркаралинского окр.	—г. Каркаралинск
Киевской обл.	—г. Киев
Киргизской АССР	—г. Фрунзе
Кировского края	—г. Киров
Красноярского края	—г. Красноярск
Крымской АССР	—г. Симферополь
Куйбышевского края	—г. Куйбышев
Курской обл.	—г. Курск
Ленинградской обл.	—г. Ленинград
Молдавской АССР	—г. Тирасполь
Мордовской АССР	—г. Саранск
Московской обл.	—г. Москва
Немцев Поволжья АССР	—г. Энгельс
Одесской обл.	—г. Одесса
Омской обл.	—г. Омск
Оренбургской обл.	—г. Оренбург
Саратовского края	—г. Саратов
Свердловской обл.	—г. Свердловск
Северного края	—г. Архангельск
Северокавказск. края	—г. Пятигорск
Сталинградского края	—г. Сталинград
Таджикской ССР	—г. Сталинабад
Татарской АССР	—г. Казань
Туркменской ССР	—г. Ашхабад
Узбекской ССР	—г. Ташкент
Удмуртской АССР	—г. Ижевск
Харьковской обл.	—г. Харьков
Челябинской обл.	—г. Челябинск
Черниговской обл.	—г. Чернигов
Чувашской АССР	—г. Чебоксары
Южноказахстанск. обл.	—г. Чимкент
Якутской АССР	—г. Якутск
Ярославской обл.	—г. Ярославль

ՀՍՍՌ Պետական գրադարան
Гос. Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ա. անվան
им. А. Мясникяна
ՀՍՍՌ-ական անվան

«Ազգային գրադարան»
NL0193272

691

С 36 1
С71463

1
2

Инструкция

по оккредитивной операции в гострудсберкассах